

ՀԵՆՆՈՍՈՒԹԻՒՆ

Աշխարհիս մէջ գտնուած ամենեկն հաշակատր մարգարիտներուն վրայ :

Հիւս պատմեաց մէջ շատ մեծ գովու-  
թեամբ կը յիշուին Ագիպտոսի վերջին  
թագուհւոյն Աղէոպատրայի երկու փա-  
ռաւոր մարգարիտները . որոնց ամէն մէ-  
կը միլիոն մը սեստերտ կ'աժէր կըսեն<sup>1</sup> :  
Պլինիոս կը պատմէ թէ Աղէոպատրա  
ուզելով ծաղը ընել Մնտոնիոսի ըրած  
մեծածախ կոչուելներուն աղքատու-  
թիւնը , խոստացաւ որ ինքը այնպիսի  
հացկերոյթ մը անոր ընէ որ միլիոն մը  
սեստերտ երթայ : Չհաւտաց Մնտոնիոս  
ու ծիծաղեցաւ . բայց փառասէր թա-  
գուհին խօսքի տակ չմնալով , զՄնտո-  
նիոսը երկրորդ օրուան սեղանի հրաւի-  
րեց : Աւ իրաւցընէ փառաւոր կերա-  
կուրներ ու ըմպելիքներ կը վխտային .  
բայց Մնտոնիոսի ու Աղէոպատրայի աչ-  
քին առջև ասոնք մեծ բան մը չէին :  
Երբոր Մնտոնիոս ծիծաղելով մը ամէն  
մէկ կերակուրին զինը հարցունելով  
վրայ է վրայ կը զարնէր , ու Աղէոպա-  
տրային դառնալով , Վեռ շատ վար ենք  
հազար բիւր սեստերտէն կ'ըսէր . Վիչ  
մ'ալ կեցիր , պատասխան տուաւ Աղէո-  
պատրա . ասոնք դեռ բան չեն . հազար  
բիւր սեստերտը ես իմ ձեռքովս պիտի  
ուտեմ : Այ ըսելու ատեն ոսկիէ բաժակ  
մը դիմացը բերին մէջը քացախ . զար-  
մացաւ Մնտոնիոս աս նոր տեսակ կե-  
րակրոյն վրայ . ան ատեն հանեց Աղէո-  
պատրա ակնջի մարգարտեայ օղը որ ինչ-  
պէս ըսինք հազար բիւր սեստերտ կ'ա-  
ժէր , ու քացախին մէջ նետեց . երբոր  
լուծուեցաւ , առաւ իմեց . ու հպարտու-  
թեամբ մը դարձաւ Մնտոնիոսի նայե-  
ցաւ , որուն կարմրիլը իրեն համար  
մեծ յաղթանակ մը կը համարէր : Այ  
օղին միւս զոյգը Աղէոպատրայի մեռնե-  
լէն ետև ( ) գոստոս Հոմ տարաւ , ու  
շատ մեծ ըլլալուն՝ երկու կտոր ընել

<sup>1</sup> Որ գրեթէ 1,200,000 ֆրանք կ'ընէ . 8 սես-  
տերտը 1 ֆրանք կամ 5 դուռուշ կ'ընէ :

տուաւ ու Մստղիկ դիցուհւոյն նուիրեց :  
Ասովպոս անունով կատակերգակին  
մէկուն որդին ալ կը յիշուի Աղոդիոս ա-  
նունով , որուն համար Արատիոս կ'ըսէ  
թէ

Ըղջքնազ մարգարիտ յունկանէն Մետելայ  
Առ և լոյժ 'ի քացախ շառաւիղն Եսովպայ ,  
Եւ սեստերտ հարիւր բիւր  
Ի մի ումիզ կերակրիւր : <sup>1</sup>

Ապանիոյ Փիլիպպոս Բ թագաւորին  
Բանամայի մարգարիտ մը ընծայ տրուե-  
ցաւ տանձի ձեռով , աղաւնիի հաւկթի  
մեծութեամբ . ասոր 100,000 ֆրանք  
զին կտրեցին :

Պարսից Շահին անուանի մարգարի-  
տը զոր Թաւերնիէ Վաղղիացի Ճանա-  
պարհորդը անձամբ տեսած է 1633ին ,  
72,000 թումանի ( միլիոն ու կէս  
ֆրանք ) աժէք ունի կ'ըսէ :

Անետիոյ հասարակապետութիւնը  
( ) մացոյ Աիւլէյման թագաւորին 400,  
000 ֆրանքի արժէքով փառաւոր մար-  
գարիտ մը ընծայ ըրաւ :

Աոտոլփոս Բ կայսեր թագին վրայի  
մարգարիտը կ'ըսուի թէ 30 քրադ կը  
կշռէր . իսկ մեծութիւնը տանձի չափ  
կար . բայց ինչպէս որ հաւանական կ'ե-  
րևայ մեծցուցած բան մըն է ասիկայ :

Անն ժ. քահանայապետն ալ հայազ-  
գի հարուստ վաճառականէ մը գեղեցիկ  
մարգրիտ մը գնեց 350,000 ֆրանքի :

Վանի մը տարի առաջ Ղափա կըղ-  
զիէն մեծ , հաւկթաձև ու կաթնագոյն  
ճերմակ խիստ աղուոր մարգարիտ մը  
Աատրաս բերուեցաւ , զորն որ ճարտար  
ակնագործ մը բանեցաւ ու ձևացուց  
յուշկապարկի կամ սիբէնայի<sup>2</sup> մարմին .  
որուն գլուխն ու թևերը ճերմակ գրա-  
կոնտիկոնէ<sup>3</sup> էին . իսկ վարի կողմը կամ  
ձկան պոչը՝ կանաչ գրակոնտիկոն : Թէ  
մարգրիտը և թէ բանուած գրակոնտի-

<sup>1</sup> Որտտ երգիծ . Բ . Գ . 239 :

<sup>2</sup> Սիբէնայ՝ որոնց մէնք համբարուս կ'ըսենք ա-  
ռասպելեալ օրիորդներ էին որ Սիկիլիոյ ժայռե-  
րուն վրայ կը բնակէին , ու ճամբորդները իրենց  
երգերուն անուշութեամբ հրապուրելով կը նա-  
ւաբեկէին . զասոնք մէջքէն վրա ձկան պէս պոչա-  
ւոր կը նկարէին հիները :

<sup>3</sup> Տճ . Բիէ : Գ . Գ . Email .

կանր , ինչպէս տեսնողներէ լսեցինք , սքանչելի բան մըն էր՝ որ մարդուն աչքը կ'առնէր գեղեցկութեամբը . մէջքի կաւ մարին վրայ այս տողը փորագրած է եղեր .

Fallunt aspectus cantusque Syrenis.

Սիրենայց պատրուկ է գեղ և գեղգեղ :

Ինչո՞ւ հիմակուան կամ ծանօթ մարգրիտներուն ամենէն գեղեցիկը Սոքրուայ Օղիմայի թանգարանին մէջինն է . ասիկա 28 քրագ կը կշռէ , ձևը կըր գնտաձև , ու այնպէս շողջողուն՝ որ առջի տեսածիդ՝ քեզի թափանցիկ կ'երևայ : Օղիմայ այս մարգրիտը հնդկի նաւու մը իղոր անունով նաւապետէ մը գներ է . և այնչափ յարգի է ու անգիւտ այս պատուական գոհարը , որ մութուայի մէջ ճամբորդներուն առջի տեսնելու բաներէն մէկը սեպուած է :

**ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ**

**ԲՆԱԲԱՆՈՒԹԻՒՆ**

**Գոյն**

Ի՞նչու մէջ սփռած այսչափ տեսակ գոյներուն երանգն ու փողփողումը ամէն ժամանակ մարդկային մըտաց զարմանքն ու զուարճութիւնը առաւելու պատճառ եղած է , միանգամայն և զխոնարու՝ թէ արդեօք ինչէն առաջ եկած են այսչափ զանազանութիւն երանգոյ , արդեօք ամէնը մէկ սկիզբէ թէ այլ և այլ սկիզբներէ յառաջագայեալ է : Հոս բացատրենք թէ մարմնոց գունաւորելուն գլխաւոր սպառնալիքն է :

Երբ մարմնոց մը մակերևութին զարնելով ու անկէ ցողանալով՝ աչքի գործարանին մէջ ըրած տպաւորութիւնը կը կոչուի գոյն : Եւտոն առջինն եղաւ որ արևու ճառագայթ մը եռանկիւնի հատուածակողմ ապակեոյ մէջէն անցընելով տեսաւ , որ նոյն ճառագայթը եօթը արփի բաժնուեցաւ եօթը այլևայլ

գոյներով , որ են կարմիր , նարնջի , գեղին , կանաչ , ծիրանի , կապուտակ , մանուշի . որմէ հետեւեցաւ թէ լուսոյ ճերմակ ճառագայթները աս եօթը գոյներէն բաղկացեալ են :

Երբ մարմնի գոյացութեանց մէջ կան ոմանք որ իրենց վրայ ինկած լուսոյ եօթներփնեան արփիները բովանդակ կը ծծեն , անով բոլորովին սև կերևնան . կան ուրիշներ ալ որ իրենց վրայ ինկած արեգական ճերմակ լոյսը բոլորովին կը վանեն առանց ամենեին պահելու , որով մարմնը ճերմակ կը տեսնուի . բայց կան մարմիններ ալ որ լուսոյ գունաւոր արփիներէն մէկ քանին կը ծծեն մէկ քանին կը վանեն . ասով է ահա որ մարմինները բաղադրեալ գունով կամ կիտերանգ կը տեսնենք : Օր օրինակ մարմին մը կարմիր կ'ըլլայ , երբ իր մակերևոյթը լուսոյ ամէն արփիներն ծծէ և կարմիր արփին միայն ցոլացնէ . կապոյտ կերևնայ՝ երբ կապոյտ արփին միայն ցոլացնէ ու մէկալ արփիները ծծէ . ասանկ իմացիր ամէն գոյներուն վրայ ալ :

Ինչո՞ւ ճառագայթ ծծելու և ճառագայթ ցրուելու յատկութիւնը կը կախուի իրենց մակերևութէն և իրենց բաղկացուցչաց բնալուծական գոյացութեանէն : Երբ այն մարմինները որ կարողութիւն ունին լուսոյ ամէն երանգները ծծելու ու մէկը միայն ցոլացնելու , անոնք կը կոչուին գորր փոստափէլ կամ նիւթ փոստափէլ . որ ամէն արարածոց մէջ , այսինքն ծառոց արմատներու , բուններու , տերևներու , ծաղկներու , սլաղոց , և կենդանական գոյացութեանց մէջ անխտրաբար սփռած ըլլալով , մարդիկ շատ աշխատութեամբ կը հանեն կը մաքրեն և կը գործածեն ներկագործութեան արհեստով :

Գունաւորիչ նիւթերու մէջ քիչ կը գտուի որ բնական կերպով զատուած ըլլայ ուրիշ բաղկացուցիչ նիւթերէն՝ որոնց հետ զրեթէ միշտ խառնուած է : Եւս բանս է որ զիրենք այն նիւթերէն զատելը կը դժուարացնէ :

Գործիւնոր մարմնոց մէջ հասարակաբար գտուած գոյներն են կարմիրը ,